

ԱՌԱՋԻՆ ԽԱՉԱԿՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱԶԱՏՈՒՄԸ

ՀԱՄԵՄԱՏ ԿԻՒԿԵԱՆ ՏԱՐԵԳՐՔԻՆ

Խաչակրության պատմության գլխավոր աղբյուրները ամփոփում են «Recueil des Historiens des Croisades» հավաքածուին մէջ, հրատարակուած Փարիզ՝ Ֆրանսական Ճեմարանին կողմէ, սկսեալ 1841-էն:

«Recueil»-ը, ստորաբաժնուած է «Արեւմտեան» և «Արեւելեան» աղբյուրներու, Հայկական աղբյուրները առանձին հատոր մը կը կազմեն, որոնց համար Michaud, Խաչակրության երեւելի պատմագիրը, 1829-ին կը գրէր. «Les chroniques arméniennes sont en petit nombre, mais ce qu'elles rapportent des premières croisades en Asie mérite d'être connu. «Michaud, Bibl. des Croisades, 1ère partie p. VII-VIII Paris 1829. Կան հուսկ յոյն պատմիչներ, կան նաեւ ուրիշ անթիւ ժամանակագրական աղբյուրներ, որոնք առանձին հրատարակուած են.

Հայկական աղբյուրներու մէջ (Recueil, 1869, t. I, p. 606-672, յաւելուած 673-680), անցած է նաեւ Սմբատ սպարապետի «Տարեգրք»-ը, Ֆրանսերէն թարգմանութեամբ, զոր առաջին անգամ հրատարակեց Ռական Գեորգեան Մոսկուայի մէջ 1856-ին, երկրորդ անգամ Կ. Վ. Շահնազարեան Փարիզի մէջ 1859-ին պատմական ծանօթութիւններով.

Ս. Ղազարու մատենագրանի «Կիւիկեան Տարեգրք»-ը Սմբատի տարեգրութիւնն է, սպարապետին հաւաքած գործը, զոր ժ.Գ. դարու վերջին քառորդին Վասիլ գրիչ ընդօրինակած է, հաւանօրէն բնագրէն, վասն զի 1276-ին Սմբատի մահէն առաջ կը դադրէ, և չի ճանչնար անոր շարունակողները. այս ձեռագիրը ցարդ անընկեր է բոլոր Հայ Զեռագիրներու հոծ հաւաքածոներուն մէջ.

Վերոյիշեալ երեք հրատարակութիւններն ալ Սմբատի այս գործին վրայէն քաղուածներ են ժ.Գ. դարուն աւելի կամ նուազ յաջողութեամբ կատարուած, և որոնք մինչեւ 1331 թուականը կը հասնին:

Առաջին Խաչակրության և Երուսաղէմի ազատութեան հետեւեալ պատմութիւնը կը քաղենք մեր ընտիր Կիւիկեան Տարեգրքի էջերէն:

326 թուին Հեղինէ դշտոյին Ս. խաչը գտնելէն վերջ, երբ տախաւ առ տախաւ կայսրութեան արեւելեան բոլոր նահանգներուն մէջ քրիստոնէութիւնն հաստատուեցաւ, արեւելքէն եւ արեւմուտքէն հոծ ուխտագնացութիւններու հոսանքներ դէպի Ս. Երկիրը կ'ուղղուէին:

Կոստանդինոս ինքնին Քրիստոսի տընօրինական գլխաւոր տեղերուն մէջ, Երուսաղէմ կամ շուրջը, կառուցած էր հոյակապ տաճարներ: Բոլոր Դ եւ Ե դարերը շարունակեալ վերելք մը եղան սրտեռանդըն ուխտագնացութիւններու: Երեւելի անձեր, սուրբեր եւ սրբուհիներ, հոն դաշին ապրելու ու մեռնելու համար, աւելի ընտրելով Քրիստոսի մտերին աղքատութիւնը՝ քան Հոռոմի յոխորտ եւ ամենազեղիւ կեանքը:

Է դարուն առաջին քառորդին, 614-ին,

Խոսրով Բարուէղի (590-628) Երուսաղէմի զրաւումով, եւ անկէ քսանըջորս տարի վերջ Օմար Ա. (634-644) ամիրայի Պաղեստին մուտքով, դժուարացաւ ուխտագնացութիւնը դէպի Ս. Երկիր. սակայն միշտ մնաց դեռ ազատ մուտք եւ սրբատեղիներուն այցելութեան կարելիութիւն, այնպէս որ Գաղղիոյ Մեծն Կարոլոս հզօր թագաւորը (754-813) Հարուն-է-Ռաշիտի բարեկամութենէն օգտուելով զանազան ուրիշ դիւրութիւններ ալ ձեռք ձգեց, ինչպէս Հիւրանոց մը ունենալու իրաւունքը:

Այս կացութիւնը նպաստաւոր մնաց արեւելքի եւ արեւմուտքի քրիստոնեաներուն համար մինչեւ ժ. դարու վերջը: ԺԱ. դարուն սկիզբը, ճիշտ 1010-ին Հագիմ ամիրայետը Ս. Յարութեան տաճարը կ'ործանել տուաւ, ասով բոլորովին նոր եւ աննախընթաց ծանր կացութիւն մը ստեղ-

ծուեցաւ (Տարեգ. թղ. 7ա): Թէեւ շուտով տաճարը վերաշինուիլ սկսած էր, սակայն խաւամութիւնը ցոյց տուաւ անով իր կրօնական թշնամութեան անհաշտ նրկարագիրը քրիստոնեաներուն հանդէպ, հարկապահանջումներով նեղելով ուխտաւորները: Արեւմուտքը ծանրապէս զգացուեցաւ այս դէպքերէն ու կացութենէն:

ԺԱ. դարուն սկզբնաւորութեան ոչ միայն Ս. Երկիրը եւ քրիստոնեայ Արեւելքի կացութիւնը ծանրացած էր, այլ նաեւ Արեւմուտքի դռներուն ամբողջիւնները լուրջ եւ մտահոգիչ դրութեան մէջ կը դնուէին: Ը դարուն (717-718) Լեւոն Ի. սաւրացին Բիւզանդիոնի դռներուն առջեւ իսլամ յարձակողական կասեցնելով, անկէ քիչ վերջ 732-ին Կարոլոս Մուրճ (+ 741) Ֆրանսայի թագաւորին ալ Փուլթիէի առջեւ Սպանիայէն բարձրացած Արաբ հեղեղանման ոյժերը ջնջելով, երկու վիթխարի աշխարհները, Իսլամ եւ Քրիստոնեայ, մինչեւ ժ. դար կայուն վիճակի մը մէջ դէմ դիմաց անշարժ կը մընային: ԺԱ. դարուն միայն նոր ոյժ մը առաւ խաւամութիւնը, թէեւ իրրեւ կայսրութիւն արդէն իսկ կը կրէր շատ նահանգներու մէջ՝ անկումի նշանները: Սպանիոյ մէջ զայն վերակազմեցին իրրեւ յարձակողական զօրութիւն, Ափրիկէի իշխող Ալմորաւիտ հարստութիւնը, Միջերկրականի աւազանին մէջ ալ Արեւելքի ամիրայետները տիրացան յաջող յարձակողականի նպաստաւոր դիրքերու կղզիներուն. հուսկ հեռաւոր արեւելքէն թուրք մէն նոր վայրենիներ երեւցան, որոնք հաստատուելով Բիւզանդական կայսրութեան արեւելեան նահանգներուն եւ Հայաստանի մէջ՝ ամենադժուարին կացութեան մէջ դրին կայսրութիւնը եւ Տաւրոսի նորահաստատ Հայ իշխանութիւնները:

1054-ին Տուղրիլ անթիւ բաղմութեամբ մտաւ Հայաստան, Տուրուբերանի Բերկի

քաղաքին բնակիչները սուրով եւ գերու-թեամբ բնաջնջելէ յետոյ քաղեց Արճէշի վրայ, որ յետ ութօրեայ պաշարումի, ճրկեցաւ բռնաւորի կամքին, արճէշցիները շուտով աղատեցան անոր ճիրաններէն, յաջող խորամանկութեամբ մը համոզելով՝ որ քալէ Մանազկերտի վրայ: (Տարեգր. թղ. 29բ):

Մանազկերտ, Տուրուբերանի Հարք դաւառին մեծադոյն եւ ամուր քաղաքը՝ որ միանգամայն դուռն էր կայսրութեան բոլոր արեւելեան նահանգներուն, վստահ իր ամբողջիւններուն եւ իր Վասիլ Ապուքապայ քաջ Հայ իշխանին վրայ, վճռեց պաշտպանել զէնքով իր անկախութիւնը: Տուղրիլ օրը օրին աւելի մօտէն սեղմեց քաղաքին պարիսպները իր անհամար զօրքերուն շարքերով, միաժամանակ փորել տալով անոնց հիմերը: Քաղաքին պաշտպանները երբ թշնամիի նենգաւոր ուղղութեամբ տենդալին իրենք ալ սկսան ներքնուղի մը բանալ, եւ նախադրեալ ռազմախաղով մը յաջողեցան կալանաւորել այլադղի խուրդները, սուլթանին Ոսկեծամ աներով միասին եւ լոյս աշխարհ բերելով զանոնք սրէ անցուցին: (Տարեգր. թղ. 29բ): Ասոր վրայ Տուղրիլ զայրացած Բաղէշէն բերել տուաւ Վասիլ կայսեր սոսկակաթխար բարանը, անով հարուածելու համար պարիսպներուն կողերը: Մանազկերտ թողաց պահ մը երբ իր դիմաց կընդունէր թախտն որոշող մեքենան ծառա-ուիւններու բախտն որոշող մեքենան հնարագետ ցած տեսաւ. սակայն շուտով հնարագետ Հայ երէց մը դտաւ զայն ջլատող մեքենայ մը (Տարեգր. թղ. 30ա), եւ առաջին հարուածով ջախջախեց բարանի խողակներէն մէկ քանին: Այս յաջողութիւնը քիչ օրերու շունչ մը քաշել տուաւ քաղաքա-օրերու շունչ մը քաշել տուաւ քաղաքա-օրերուն: Թշնամիները ամբարցուցին վերստին բարանը եւ սկսան ծանր ծանր քարերով թռակել պարիսպները. կացութիւնը յուսահատական դարձաւ Մանազկերտի

համար, Բիւզանդիոնի մէջ Մոնոմախոս կայսրն ալ սրտաթափ եւ չնչարդել մնաց այս լուրով:

Վասիլ, Մանազկերտի իշխանը, ձեռք առաւ վերջին միջոց մըն ալ, դիւցադնական արարքի հրաւեր կարդաց իր զօրքերուն. թէ որ զինուոր մը ելլէ քաղաքէն եւ մտնէ թշնամիի շարքերուն մէջ, մերձենայ բաբանին եւ այրէ դայն, պիտի վարձատրուի առատ դանձերով եւ կայսրէն մեծամեծ աւագութիւններով: Եթէ դիւցադնօրէն մեռնի, որդիները կամ մերձաւորները պիտի ճոխանան նոյն վարձատրութիւններով: Այս որ լսեց Ֆռանկ հոռոմ զինուոր մը, դուրս ցատքեց իր շարքերէն «եւ կ'այրեմ բաբանը եւ արկնս կը թափեմ քրիստոնեաներու ազատութեան համար, ըսաւ ան, վասն զի միայն եմ եւ չունիմ իմ վրաս լացող կին կամ որդիներ»: (Ուռհ. էջ 120): Ան պատրաստուեցաւ, մէջքին կապեց երեք շիշեր լեցուն նաւթով, հեծաւ իր ձին, յանձնեց ինքզինքը Մանազկերտի անմեղներու ազօթքին ու դուրս թռաւ. երթալով մօտեցաւ թշնամիներուն, որոնք կարծեցին թէ թրդթարեր մըն է օրհասական քաղաքէն, թոյլ տուին, ան մտաւ բանակին մէջ, ուր զօրքերը գիշերային յարձակումներէ վաստակաբեկ եւ օրուան կիզիչ արեւէն պատրաստուելու համար քաջուած վրաններու տակ կը ննջէին: Դիւցադը շեղեց իր ընթացքը եւ մօտեցաւ բաբանին, պահակները զինքը հետաքրքիր մը կարծեցին, իսկոյն ան հանելով մէջքէն շիշ մը դարկաւ բաբանին ոտքին, փայլակի արագութեամբ դառնալով շուրջը՝ ուրիշ դանաղան կողմերն ալ մնացած շիշերով հարուածեց. բոբրօքեցաւ կրակը, բաբանը Բաբելոնի հնոցին չափ բարձր բոցեր արձակեց. հոռոմը սրարչաւ վերադարձի ճամբան բռնեց եւ մտաւ քաղաք երբ այլազգիներու սպառնալից բազմութիւնը հետապնդել ըսկըած էր զինքը:

Անսահման եղաւ Մանազկերտի ցնծութիւնը, Մոնոմախոս՝ երբ այս լուրն ստացաւ՝ դիմովցաւ ցնծութենէն, դիւցադը Բիւզանդիոն կանչեց եւ խոստացուած պատիւներով եւ պարգեւներով օժտեց: Սուլթան Տուղրիլ ալ հիացաւ մարդուն արիութեան վրայ, խնդրեց անդամ մը տեսնել ու վարձատրել զանիկա:

Տուղրիլ պարիսպներու հիմերը փորելու երկրորդ փորձ մըն ալ ըրաւ, բաբանի այրումէն վերջ. մանազկերտցիները քաջաւերուած իրենց ունեցած անլուր յաջողութիւններէն, այս երկրորդ անգամ ալ ըսկըսան պարիսպներու տակէն դիմաւորել թշնամիները, եւ այս անգամ զինուած երկաթի ճանկերով՝ աւելի բազմաթիւ որսացին անոնցմէ քան նախորդ անգամ (Տարեգր. թղ. 31ա): Քաղաքացիներն ալ իրենց ստորերկրեայ մարտիկներու յաջողութիւններէն խանդավառուած, կատակ մը ըրին Սուլթան Տուղրիլին: Խոզ մը բերին, դրին դայն երէցի շինած մեքենայի աչքին, եւ ձգեցին պարիսպներէն դուրս, Սուլթանին առջեւ, ետեւէն ձայնելով. «Սուլթան Տուղրիլ, առ դայն եւ ամուսնացիր, եւ Մանազկերտը քեզ պըտյա» (Տարեգր. թղ. 31ա): Տուղրիլ վերադարձուած իր ամենախոր զգացումներուն մէջ եւ ամօթահար, իր զօրքերը Մանազկերտի վրայ առաջնորդողները տեղն ի տեղը ըսպաննելէ վերջ՝ երկիրը քաջուեցաւ:

Մանազկերտ այս փառահեղ յաղթութեան պտուղը 16 տարիներ վայելեց. չափազանց ուրախութիւնը չլացուց եւ բարոյապէս տկարացուց քաղաքացիները, մինչ պարտուած թշնամին, զլաստացած իր նախկին յոխորտանքներէն, քառապատկեց իր ուժերը փոխ-վրէժի զգացումներով:

Տուղրիլ մեռած էր արդէն, եղբայրը Ալիաթան 1070-ին անհամար զօրքերով յանկարծ քաղաքին վրայ յարձակեցաւ, բոլորովին անպատրաստ գտաւ դայն, մէկ

օրուան մէջ դրաւ եւ բնակիչները սուրէ անցուց (Տարեգր. թղ. 45բ):

Այսպէս Մանազկերտի անկումով՝ Փոքր Ասիոյ մէջ գործնականօրէն չէր մնար այլեւս իսլամութեան առջեւ դիմադրող ամբողջիւններ. հետեւաբար ազատ ու բաց կը մնային անոնց յարձակումներուն Արեւմուտքի եւ կայսրութեան երկիրները: Սելճուք նորահաստատ սուլթանութիւնն ալ՝ որ Իկոնիոյ մէջ դրած էր իր աթոռը Փոքր Ասիոյ սրտին վրայ, Բիւզանդիոնի համար դարձած էր արդէն տեւական սպառնալիք: Ալէքս Կոմնենոս նոր կայսրը (1057-1059) զբաղած էր Դանուբի վրայ եւ Թրակիոյ մէջ Պաթմիոններու դէմ (Petchenègues¹). իսկ Արեւմտեան սահմաններու վրայ նոր թշնամի մը, Ռոպերտ Կուիսկարտի դէմ, կայսրութիւնը պաշտպանելով: Ալէքս մեռնելով իր յաջորդին կը թողուր վերջին աստիճանի տկարացած կայսրութիւն մը: Մինչ անդին Թուրքերը, Սուրիան եւ Երուսաղէմը դրաւելով Եգիպտոսի ամիրաւորութեան տակարար քանի մը խոշոր բանակներ կազմելու. ասոնց հետ պատրաստ էին խաչադրօշ հաւատացեալներու թիւը, բաւարար էր արդէն քանի մը խոշոր բանակներ կազմելու. ասոնց հետ պատրաստ էին ակնարկին ոտքի կանգնելու համար, զէնքը ձեռքին, խաչը կուրծքին:

Ուրբանոս Բ. (1088-1099) քահանայապետը, նկատելով ժամանակներու եւ հոգեբանութիւններու հասունութիւնը, բանաձեւեց իր նախորդին, Գրիգոր Է. ի ծրարները, աւելի առարկայական եւ որոշ նպատակի մը ուղղելով դայն, եւ 1095-ին Ֆլերմոնի սիւնհոգոսին մէջ վճռեց սրբաֆլերմոնի իշխաններու եւ պարոններու բանակները. հետեւաբար համահաւաք, միաշունչ խաչակրութեան առաջին դադափաւրը յղացաւ Պապութիւնը եւ դայն քարոզեց: Գրիգոր Է. (1073-1085) առաջին ան-

գամ պաշտօնական կոչ մը հրատարակեց 1074-ին, որով կը հրաւիրէր, յանուն քրիստոնէութեան, բոլոր հաւատացեալ իշխանները՝ երթալու քրիստոնեայ Արեւելքին ազատութեան եւ Բիւզանդիոնի պաշտպանութեան, որուն դռներուն առջեւ արդէն իսկ հասած էր Իսլամ սպառնալիքը: Այս կոչը անհետեւանք մնաց, համբերօրական ներքին զգաւթիւններու եւ կըռիւններու պատճառաւ: Հետզհետէ սառնակայն, Ս. Երկրէն վերադարձող ուխտաւորներուն ահաբեկիչ պատմութիւնները, քարոզիչներու յորդորները, հուսկ օգնութեան աղերսարկու Բիւզանդիոնի պատուիրակներուն Արեւմուտք ժամանումը, քիչ տարիներու մէջ հասունցուցին բովանդակ Եւրոպայի մէջ իսլամութեան դէմ դակ Եւրոպայի մէջ իսլամութեան մը անհրաժեշտութեան գաղափարը: Զանազան երկիրներու մէջ բնադրով իսկ պատրաստուած ներու մէջ բնադրով իսկ պատրաստուած խաչադրօշ հաւատացեալներու թիւը, բաւարար էր արդէն քանի մը խոշոր բանակներ կազմելու. ասոնց հետ պատրաստ էին խաչադրօշ հաւատացեալներու թիւը, բաւարար էր արդէն քանի մը խոշոր բանակներ կազմելու. ասոնց հետ պատրաստ էին ակնարկին ոտքի կանգնելու համար, զէնքը ձեռքին, խաչը կուրծքին:

Ուրբանոս Բ. (1088-1099) քահանայապետը, նկատելով ժամանակներու եւ հոգեբանութիւններու հասունութիւնը, բանաձեւեց իր նախորդին, Գրիգոր Է. ի ծրարները, աւելի առարկայական եւ որոշ նպատակի մը ուղղելով դայն, եւ 1095-ին Ֆլերմոնի սիւնհոգոսին մէջ վճռեց սրբաֆլերմոնի իշխաններու եւ պարոններու բանակները. հետեւաբար համահաւաք, միաշունչ խաչակրութեան առաջին դադափաւրը յղացաւ Պապութիւնը եւ դայն քարոզեց: Գրիգոր Է. (1073-1085) առաջին ան-

(1) Դանուբի եւ Տօնի գետաբերաններու վրայ բնակող Թուրք-Հոն ցեղի մնացորդներ, Յոյն հեղինակները զանոնք Պաթմիոն կոչեցին:

